ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՀԱՅԵԼԻ

Շատ կինոնկարներում, հավանաբար, տեսած կլինեք այսպես կոչված «միակողմանի» հայելիներ: Դրանց միջով մի կողմից լույսն անցնում է, իսկ մյուս կողմից՝ անդրադառնում, ինչպես սովորական հայելուց: Հնարավո՞ր են արդյոք այդպիսի հայելիներ: Այո, հնարավոր են: «Միակողմանի» հայելիներ, օրինակ, կան յանկացած բնակարանում: Պայծառ, արևոտ օրերին փողոցից պատուհանի ապակու միջով անցնող լույսն անհամեմատ ավելի շատ է, քան այդ նույն ապակուց անդրադարձող «սենյակային լույսն» է: Ուստի պատուհանից դուրս նայելիս լավ երևում է փողոցը:

Ընդհակառակը, սենյակից պատուհանի ապակով անցնող լույսի քանակը զգալիորեն ավելի քիչ է, քան «փողոցային» լույսի այն քանակը, որն անդրադառնում է պատուհանից: Այդ պատճառով էլ ցերեկով փողոցից տեսնել սենյակի ներսը գրեթե անհնարին է: Փողոցում գտնվողը տեսնում է լոկ իր արտացոլումն ապակու մեջ:

Երեկոյան, երբ փողոցում մութ է, իսկ սենյակը լուսավորված է, փողոցից հեշտ է տեսնել սենյակի ներսը: Բայց սենյակից փողոցը տեսնել հնարավոր է միայն դեմքն ապակուն հպելով: